«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՑՈՐԴԻՉՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01/140

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-68/19»

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК» (ԳՀԲ) 01/140 (ОЗП) Գնման ընթացակարգերի բաժին Отдел закупочных процедур

ք. Մեծամոր «19» «06» 2019թ.

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մովսես Վարդանյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և

**«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Արման Շահինյանի, որը գործում է «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված **կցորդիչներ** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի**:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի:**

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Սույն պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքի՝ հաշվապահական ձևակերպման համար հիմք ընդունել պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան դրական եզրակացության հիման վրա Գնորդի կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5640000 (հինգ միլիոն վեց հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ - 940000** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու

նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **7 (յոթ) աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավե քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 Հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ |
| 0910, ք. Մեծամոր, Արմավիրիմարզ, | ք. Երևան, Նոր Նորքի 8 մ/շ, 30/43, |
| Հ/Հ 1930000199200100 | Հ/Հ 2050022205441001 |
| «ԿոնվերսԲանկ» ՓԲԸ, ք. Երևան, | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| **ՀՎՀՀ** 04401874, | **ՀՎՀՀ** 00862214, |
| **Հեռ./ֆաքս՝** 28-18-80, 28-06-69, | **Հեռ.՝** 043-49-15-16, |
| **Հեռ.՝** 20-04-91, 33-40 | **E-mail:** info@autofan.am |
| **E-mail:** anpp@anpp.am | |
| ................ Մ. Վարդանյան | ................ Ա. Շահինյան |

Հավելված N 1
« 19 » « 06 » 2019թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-68/19» ծածկագրով
N 01/140 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը*** |
| 1 | 44322530 | **Կցորդիչ ЭП.СО А-189674 և АЭ.СО А-189362 նախագծե-րի կատարման համար:** | ՌԴ | **Ներքոգրյալ 1.1÷1.22 կետերում ներկայացված կցորդիչները պետք է լինեն նոր, չօգտագործված, չվերականգնված, չհանդիսանան որպես նմուշ, թողարկված լինեն 2018թ-ից ոչ շուտ: Արտադրող կազմակերպությունը պետք է ունենա արտադրանքի լիցենզիա՝ ԱԷԿ-ների համար նախատեսված: Բոլոր կցորդիչները պետք է ունենան համապատասխանության սպեցեֆիկացիա:** | | | | | | | |
| **1.1** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 2ՊԿՎտպնգ—ՀՖ1-70-Պր (2 ПКВтпнг-Н-F1-70-Пр), ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Ծայրային **2ՊԿՎտպնգ—ՀՖ1-70-Պր** մինչև 1000Վ (1000В) լարմամբ, ազատ կարգով գոտում տեղակայելու համար: ՎՎԳնգ(Ա)- 2x70-ՖՌԼՍ (ВВГнг(А)-2x70-FRLS) տեսակի մալուխի ծայրը հերմետիկացնելու համար, ջիլերի առանց լրացուցիչ պաշտպանության, առանց էկրանի կորացման, ծայրերի | հատ | 30000 | **120000** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հետ միասին, իրակայուն, հալոգեններ չպարունակող: Անվտանգության դասը 2 ըստ ՆՊ-001-97(НП - 001-97) (ՊՆԱԷ Գ-01-011-97 (ПНАЭ Г-01-011-97)): Տեսակը՝ **2ՊԿՎտպնգ—ՀՖ1-70-Պր** -(ՎՎԳնգ (Ա)- 2x70-ՖՌԼՍ)/0-0-Հ-ՖՌ ((**2 ПКВтпнг-H-F1-70-Пр),**-( ВВГнг(А)-2x70-FRLS)/0-0-H-FR) Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | | | | | | | |
| 1.2 | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 2ՊԿՎտպնգ—ՀՖ1-95-Պր -(2 ПКВтпнг-H-F1-95-Пр, ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Ծայրային **2ՊԿՎտպնգ—ՀՖ1-95-Պր** մինչև 1000Վ (1000В), ազատ կարգով գոտում տեղակայելու համար: ՎՎԳնգ(Ա)- 2x95-ՖՌԼՍ (ВВГнг(А)-2x95-FRLS) տեսակի մալուխի ծայրը հերմետիկացնելու համար, ջիլերի առանց լրացուցիչ պաշտպանության, առանց էկրանի կորացման, ծայրերի հետ միասին, իրակայուն, | հատ | 31800 | **127200** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հալոգեններ չպարունակող: Անվտանգության դասը 2 ըստ ՆՊ-001-97(НП - 001-97) (ՊՆԱԷ Գ-01-011-97(ПНАЭ Г-01-011-97)): Տեսակը՝ **2ՊԿՎտպնգ—ՀՖ1-95-Պր** -(ՎՎԳնգ (Ա)- 2x95-ՖՌԼՍ)/0-0-Հ-ՖՌ (((2 **ПКВтпнг-Н-F1-70-Пр** -( ВВГнг(А)-2x95-FRLS)/0-0-Н-FR) Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | | | | | | | |
| 1.3 | 44322530 | **Կցորդիչ (Муфта) 2ՊԿՎտպնգ—H-F1-95-Պր -(2 ПКВтпнг-Н-F1-95-Пр), ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Ծայրային **2ՊԿՎտպնգ—ՀՖ1-95-Պր -(2 ПКВтпнг-Н-F1-95-Пр),** մինչև 1000Վ (1000В), ազատ կարգով գոտում տեղակայելու համար: ՎՎԳնգ(Ա)- 2x95-ԼՍ (ВВГнг(А)2x95-LS) տեսակի մալուխի ծայրը հերմետիկացնելու համար, ջիլերի առանց լրացուցիչ պաշտպանության, առանց էկրանի կորացման, ծայրերի հետ միասին, հրակայուն, | հատ | 27300 | **109200** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հալոգեններ չպարունակող: Անվտանգության դասը 3 ըստ ՆՊ-001-97(НП - 001-97) (ՊՆԱԷ Գ-01-011-97 (ПНАЭ Г-01-011-97)): Տեսակը՝ **2ՊԿՎտպնգ—ՀՖ1-95-Պր** -(ՎՎԳնգ (Ա)- 2x95-ԼՍ)/ 0-0-Հ-0 (-(2 **ПКВтпнг-H-F1-95-Пр),** -( ВВГнг(А)-2x95-LS)/0-0-H-0) Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | | | | | | | |
| 1.4 | 44322530 | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎտպնգ—ՀՖ1-50 -Պր -(4 ПКВтпнг-H-F1-50-Пр), ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Ծայրային **4ՊԿՎտպնգ— ՀՖ1-50 -Պր (4 ПКВтпнг-H-F1-50-Пр),** մինչև 1000Վ (1000В), ազատ կարգով գոտում տեղակայելու համար: ՎՎԳնգ(Ա)-4x50-ՖՌԼՍ (ВВГнг(А)-4x50-FRLS) տեսակի մալուխի ծայրը հերմետիկացնելու համար, ջիլերի առանց լրացուցիչ պաշտպանության, առանց էկրանի կորացման, ծայրերի հետ միասին, հրակայուն, | հատ | 28200 | **112800** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հալոգեններ չպարունակող: Անվտանգության դասը 3 ըստ ՆՊ-001-97(НП - 001-97) (ՊՆԱէ Գ-01-011-97 (ПНАЭ Г-01-011-97)): Տեսակը՝ **4ՊԿՎտպնգ— ՀՖ1-50 -Պր** -(ՎՎԳնգ (Ա)-4x50-ՖՌԼՍ)/0-0-Հ-ՖՌ **-(4 ПКВтпнг-H-F1-50-Пр),-** ( ВВГнг(А)-4x50-FRLS)/0-0-H-FR) Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | | | | | | | |
| **1.5** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎտպնգ— ՀՖ1-95 -Պր -(4 ПКВтпнг-H-F1-95-Пр), ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Ծայրային **4ՊԿՎտպնգ— ՀՖ1-95 -Պր -(4 ПКВтпнг-H-F1-95-Пр),** մինչև 1000Վ (1000В), ազատ կարգով գոտում տեղակայելու համար: ՎՎԳնգ(Ա)-4x95-ԼՍ (ВВГнг(А)-4x95-LS) տեսակի մալուխի ծայրը հերմետիկացնելու համար, ջիլերի առանց լրացուցիչ պաշտպանության, առանց էկրանի կորացման, ծայրերի հետ միասին, հրակայուն, | հատ | 31500 | **126000** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հալոգեններ չպարունակող: Անվտանգության դասը 3 ըստ ՆՊ-001-97(НП - 001-97) (ՊՆԱԷ Գ-01-011-97 (ПНАЭ Г-01-011-97)): Տեսակը՝ **4ՊԿՎտպնգ— ՀՖ1-95 -Պր** -(ՎՎԳնգ (Ա)-4x95-ԼՍ)/ 0-0-Հ-0 (-**(4 ПКВтпнг-H-F1-95-Пр)**,-( ВВГнг(А)-4x95-LS)/0-0-H-0) Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | | | | | | | |
| **1.6** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 3ՊԿՎտէնգ 1-ՀՖ-2,5- Պր (3ПКВтЭнг 1-HF-2,5- Пр) տեսակի, հատույթը՝ 3x2.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ՎՎԳէնգ(Ա)-ԼՍ (ВВГЭнг(А)-LS) տեսակի էլեկտրական մալուխների համար: Լարումը՝ 1կՎ Հատույթը՝ 3x2,5մմ² Անվտանգության դասը՝ 3 Կարգը ՕԿ (OK)՝ 3 Տեսակը՝ **3ՊԿՎտէնգ 1-ՀՖ-2,5 - Պր (3ПКВтЭнг 1-HF-2,5-Пр)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | հատ | 16256,76 | **1203000** | 74 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 74 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.7** | **44322530** | **Կցորդիչ<br>(Муфта)<br>4ՊԿՎտԷնգ<br>ՀՖ1-10- Պր<br>(4ПКВтЭнг –HF1-10- Пр) տեսակի, հատույթը՝ 4x10 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий,<br>ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ՎՎԳԷնգ(Ա)-ԼՍ (ВВГЭнг(A)-LS) տեսակի էլեկտրական մալուխների համար:<br>Լարումը՝ 1կՎ<br>Հատույթը՝ 4x10մմ²<br>Անվտանգության դասը՝ 3<br>Կարգը ՕԿ (OK)՝ 3<br>Տեսակը **4ՊԿՎտԷնգ ՀՖ1-10- Պր (4ПКВтЭнг –HF1-10-Пр)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | հատ | 19810,81 | **1466000** | 74 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 74 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| **1.8** | **44322530** | **Կցորդիչ<br>(Муфта)<br>4ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 4x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий,<br>ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՎՎԳԷնգ(Ա)-ՖՌԼՍ (КВВГЭнг(A)-FRLS) տեսակի վերահսկման մալուխների համար:<br>Լարումը՝ 1կՎ(1kB)<br>Հատույթը՝ 4x1,5մմ²<br>Անվտանգության դասը՝ 2<br>Կարգը ՕԿ (OK)՝ 2<br>Տեսակը՝ **4ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг –HF1-1,5)**<br>Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | հատ | 9750 | **156000** | 16 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 16 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.9** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 7ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 7x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՎՎԳԷնգ(Ա)-ՖՌԼՍ (КВВГЭнг(А)-FRLS) տեսակի վերահսկման մալուխների համար: Լարումը՝ 1կՎ(1kB) Հատույթը՝ 7x1,5մմ² Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը **7ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг –HF1-1,5)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | հատ | 10950 | **43800** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| **1.10** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 10ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 10x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՎՎԳԷնգ(Ա)-ՖՌԼՍ (КВВГЭнг(А)-FRLS) տեսակի վերահսկման մալուխների համար: Լարումը՝ 1կՎ(1kB) Հատույթը՝ 10x1,5մմ² Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը **10ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг –HF1-1,5)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | հատ | 11400 | **45600** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| **1.11** | **44322530** | **Կցորդիչ (Муфта)** | АО Подольский завод | Վերջնային, թերմոնստեցված, | հատ | 16283,78 | **1205000** | 74 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, | 74 | **Մինչև 2019թ** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **19ՊԿՎԿտԷՕնգ –ՀՖ1-1,5 (19ПКВКтЭЭонг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 19x1.5 մմ², ПЗЭМИ** | электромонтажных изделий, ՌԴ | ԿՄՊվԷՎԷՎնգ(Ա)-ՖՌԼՍ (КМПвЭВЭВнг(А)-FRLS) տեսակի վերահսկման մալուխների համար: Լարումը՝ 1կՎ(1кВ) Հատույթը՝ 19x1,5մմ² Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը՝ **19ՊԿՎԿտԷՕնգ – ՀՖ1-1,5 (19ПКВКтЭЭонг –HF1-1,5)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | | | | | <<ՀԷԿ>> ФԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | | **հունիսի 30-ը** |
| **1.12** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 10ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1 (10ПКВКтЭнг – HF1-1) տեսակի, հատույթը՝ 10x1 մմ² ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՀՖ (КППГЭВнг(А)-HF) տեսակի վերահսկման մալուխների համար: Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ) Հատույթը՝ 10x1մմ² Անվտանգության դասը՝ 3 Կարգը ՕԿ (ОК)՝ 3 Տեսակը՝ **10ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1 (10ПКВКтЭнг –HF1-1)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 9300 | **111600** | 12 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ФԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 12 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.13** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 4x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՀՖ (КППГЭВнг(А)-HF) տեսակի վերահսկման մալուխների համար:<br>Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ)<br>Հատույթը՝ 4x1,5մմ²<br>Անվտանգության դասը՝ 3<br>Կարգը ՕԿ (ОК)՝ 3<br>Տեսակը՝ **4ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг –HF1-1,5)**<br>Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 8300 | **33200** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| **1.14** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 7ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 7x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՀՖ (КППГЭВнг(А)-HF) տեսակի վերահսկման մալուխների համար:<br>Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ)<br>Հատույթը՝ 7x1,5մմ²<br>Անվտանգության դասը՝ 3<br>Կարգը ՕԿ (ОК)՝ 3<br>Տեսակը **7ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг –HF1-1,5)**<br>Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 9300 | **74400** | 8 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 8 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.15 | 44322530 | **Կցորդիչ (Муфта) 10ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 10x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՀՖ (КППГЭВнг(А)-HF) տեսակի վերահսկման մալուխների համար: Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ) Հատույթը՝ 10x1,5մմ² Անվտանգության դասը՝ 3 Կարգը ՕԿ (ОК)՝ 3 Տեսակը **10ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг –HF1-1,5)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 9750 | **78000** | 8 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 8 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| 1.16 | 44322530 | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎԿտէնգ – ՀՖ1-1,0 (4ПКВКтЭнг – HF1-1,0) տեսակի, հատույթը՝ 4x1 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՖՌՀՖ (КППГЭВнг(А)-FRHF) տեսակի վերահսկման մալուխների համար, Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ) հատույթը՝ 4x1մմ² Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը՝ **4ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,0 (4ПКВКтЭнг –HF1-1,0)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 9300 | **74400** | 8 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 8 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.17** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 4x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՖՌՀՖ (КППГЭВнг(A)-FRHF) տեսակի վերահսկման մալուխների համար, Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ) հատույթը՝ 4x1,5մմ² Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը՝ **4ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг –HF1-1,5)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 9800 | **196000** | 20 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 20 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| **1.18** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 5ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (5ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 5x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՖՌՀՖ (КППГЭВнг(A)-FRHF) տեսակի վերահսկման մալուխների համար, Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ) հատույթը՝ 5x1,5մմ2 Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը՝ **5ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (5ПКВКтЭнг –HF1-1,5)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 10125 | **81000** | 8 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 8 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.19** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 7ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 7x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՖՌՀՖ (КППГЭВнг(А)-FRHF) տեսակի վերահսկման մալուխների համար,<br>Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ)<br>հատույթը՝ 7x1,5մմ2<br>Անվտանգության դասը՝ 2<br>Կարգը ՕԿ (OK)՝ 2<br>Տեսակը՝ **7ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг –HF1-1,5)**<br>Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | հատ | 11000 | **88000** | 8 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 8 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| **1.20** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 10ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 10x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՖՌՀՖ (КППГЭВнг(А)-FRHF) տեսակի վերահսկման մալուխների համար,<br>Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ)<br>հատույթը՝ 10x1,5մմ2<br>Անվտանգության դասը՝ 2<br>Կարգը ՕԿ (OK)՝ 2<br>Տեսակը՝ **10ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг –HF1-1,5)**<br>Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953- | հատ | 11400 | **45600** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2013 (ТУ 3599-301-04001953-2013) | | | | | | | |
| 1.21 | 44322530 | **Կցորդիչ (Муфта) 14ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (14ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 14x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՖՌՀՖ (КППГЭВнг(А)-FRHF) տեսակի վերահսկման մալուխների համար, Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ) հատույթը՝ 14x1,5մմ2 Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը՝ **14ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (14ПКВКтЭнг –HF1-1,5)** Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (ТУ 3599-301-04001953-2013) | հատ | 11750 | **94000** | 8 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 8 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |
| 1.22 | 44322530 | **Կցորդիչ (Муфта) 19ՊԿՎԿտԷնգ – ՀՖ1-1,5 (19ПКВКтЭнг – HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 19x1.5 մմ², ПЗЭМИ** | АО Подольский завод электромонтажных изделий, ՌԴ | Վերջնային, թերմոնստեցված, ԿՊՊԳԷՎնգ(Ա)-ՖՌՀՖ (КППГЭВнг(А)-FRHF) տեսակի վերահսկման մալուխների համար, Լարումը՝ 0,66կՎ (0.66кВ) հատույթը՝ 19x1,5մմ2 Անվտանգության դասը՝ 2 Կարգը ՕԿ (ОК)՝ 2 Տեսակը՝ **19ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (19ПКВКтЭнг –HF1-1,5)** | հատ | 12300 | **49200** | 4 | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ, վարչական տարածք կամ ՀՀ <<Զվարթնոց>> օդանավակայան, CPT (incoterms 2010) եղանակով | 4 | **Մինչև 2019թ հունիսի 30-ը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Տեխ. պայմաններ՝ ՏՊ 3599-301-04001953-2013 (TY 3599-301-04001953-2013) | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

..................Մ. Վարդանյան

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ**

..................Ա. Շահինյան

Հավելված N 2
«19» «06» 2019թ. կնքված
«ՀԷԿ-ԳՀԱՊՁԲ-68/19» ծածկագրով
N 01/140 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | **44322530** | **Կցորդիչ ЭП.СО А-189674 և АЭ.СО А-189362 նախագծերի կատարման համար:** | | | | | | | | |
| **1.1** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 2ՊԿՎտպնգ—ՀՖ1-70-Պր (2 ПКВтпнг-Н-F1-70-Пр)** | | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | 120000 | **120000** |
| **1.2** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 2ՊԿՎտպնգ—ՀՖ1-95-Պր -(2 ПКВтпнг-Н-F1-95-Пр)** | | 127200 | 127200 | 127200 | 127200 | 127200 | 127200 | **127200** |
| **1.3** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 2ՊԿՎտպնգ- H-F1-95-Պր -(2 ПКВтпнг-Н-F1-95-Пр)** | | 109200 | 109200 | 109200 | 109200 | 109200 | 109200 | **109200** |
| **1.4** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎտպնգ- ՀՖ1-50 -Պր -(4 ПКВтпнг-Н-F1-50-Пр)** | | 112800 | 112800 | 112800 | 112800 | 112800 | 112800 | **112800** |
| **1.5** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎտպնգ- ՀՖ1-95 -Պր -(4 ПКВтпнг-Н-F1-95-Пр)** | | 126000 | 126000 | 126000 | 126000 | 126000 | 126000 | **126000** |
| **1.6** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 3ՊԿՎտԷնգ 1-ՀՖ-2,5- Պր (3ПКВтЭнг 1-HF-2,5- Пр) տեսակի, հատույթը՝ 3x2.5 մմ²** | | 1203000 | 1203000 | 1203000 | 1203000 | 1203000 | 1203000 | **1203000** |
| **1.7** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎտԷնգ ՀՖ1-10- Պր (4ПКВтЭнг –HF1-10- Пр) տեսակի, հատույթը՝ 4x10 մմ²** | | 1466000 | 1466000 | 1466000 | 1466000 | 1466000 | 1466000 | **1466000** |
| **1.8** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 4ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 4x1.5 մմ²** | | 156000 | 156000 | 156000 | 156000 | 156000 | 156000 | **156000** |
| **1.9** | **44322530** | **Կցորդիչ (Муфта) 7ՊԿՎԿտԷնգ –ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 7x1.5 մմ²** | | 43800 | 43800 | 43800 | 43800 | 43800 | 43800 | **43800** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.10 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>10ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 10x1.5 մմ² | | 45600 | 45600 | 45600 | 45600 | 45600 | 45600 | **45600** |
| 1.11 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>19ՊԿՎԿտէէօնգ –ՀՖ1-1,5 (19ПКВКтЭЭонг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 19x1.5 մմ² | | 1205000 | 1205000 | 1205000 | 1205000 | 1205000 | 1205000 | **1205000** |
| 1.12 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>10ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1 (10ПКВКтЭнг –HF1-1) տեսակի, հատույթը՝ 10x1 մմ² | | 111600 | 111600 | 111600 | 111600 | 111600 | 111600 | **111600** |
| 1.13 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>4ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 4x1.5 մմ² | | 33200 | 33200 | 33200 | 33200 | 33200 | 33200 | **33200** |
| 1.14 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>7ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 7x1.5 մմ² | | 74400 | 74400 | 74400 | 74400 | 74400 | 74400 | **74400** |
| 1.15 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>10ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 10x1.5 մմ² | | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | **78000** |
| 1.16 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>4ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,0 (4ПКВКтЭнг –HF1-1,0) տեսակի, հատույթը՝ 4x1 մմ² | | 74400 | 74400 | 74400 | 74400 | 74400 | 74400 | **74400** |
| 1.17 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>4ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (4ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 4x1.5 մմ² | | 196000 | 196000 | 196000 | 196000 | 196000 | 196000 | **196000** |
| 1.18 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>5ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (5ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 5x1.5 մմ² | | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | 81000 | **81000** |
| 1.19 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>7ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (7ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 7x1.5 մմ² | | 88000 | 88000 | 88000 | 88000 | 88000 | 88000 | **88000** |
| 1.20 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>10ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (10ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 10x1.5 մմ² | | 45600 | 45600 | 45600 | 45600 | 45600 | 45600 | **45600** |
| 1.21 | 44322530 | Կցորդիչ (Муфта)<br>14ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (14ПКВКтЭнг –HF1-1,5) տեսակի, հատույթը՝ 14x1.5 մմ² | | 94000 | 94000 | 94000 | 94000 | 94000 | 94000 | **94000** |
| 1.22 | 44322530 | Կցորդիչ (Муфта) | | 49200 | 49200 | 49200 | 49200 | 49200 | 49200 | **49200** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 19ՊԿՎԿտէնգ –ՀՖ1-1,5 (19ПКВКтЭнг –НF1-1,5) տեսակի, հատույթը՝ 19x1.5 մմ² | | | | | | | | |
| | | | | | | | | | Ընդամենը | 5640000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

******Վճարումը կապարել փասփացի մատակարարված ապրանքների հանձման ընդունման արձանագրության հիման վրա:***

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ<br>«ՀԱԷԿ» ՓԲԸ | ՎԱՃԱՌՈՂ<br>«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ |
| ............ Մ. Վարդանյան | ............ Ա. Շահինյան |

*Հավելված N 3*
*«        »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրիկողմ

______________________________

______________________________

գտնվելուվայրը ______________
հհ __________________________
հվհհ ________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելուվայրը ________________
հհ__________________________
հվհհ_________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«      » «              » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20    թ.
Պայմանագրի համարը՝    ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «       » 20     թ. դուրս գրված   N ________________   հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկականբնութագրիհամառոտշարադրանքը | քանակականցուցանիշը | | կատարմանժամկետը | | Վճարմանենթակագումարը /հազարդրամ/ | Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/ |
| | | | ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի | փաստացի | ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ-ապրանքագիրը և դրական  եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »         20    թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ___________-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
20    թ. ____________________ -ին կնքված N _____________պայմանագրի շրջանակներում Վաճառողը
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
20    թ. _________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված

ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափմանմիավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է **2** օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>Հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>Ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |